

**Ռուսաստանի Հայերի Միության կողմից սահմանամերձ բնակավայրերում
իրականացվող ծրագրեր**

Հարգելի հայրենակիցներ,

Տիկնայք և պարոնայք

Երկիր մոլորակի վրա տեղի ունեցող բուռն տեղաշարժներն ու զարգացումները, ընթացիկ հարյուրամյակի մարտահրավերները, վաղուց արդեն, շոշափում են Հայաստանի, Սփյուռքի և Արցախի շահերը: Մենք չենք կարող անտարբեր մնալ թելադրված մարտահրավերների հանդեպ, հանգիստ նայել ու սպասել թե ի՞նչ տեղի կունենա և ի՞նչ է սպասվում մեզ: Գլոբալիզացվող ներկա աշխարհն իր դաժան մարտահրավերներով նման անհոգության տեղ չի թողնում:

Առանց վերապահման կարող ենք ասել, որ մենք միայն համազգային միասնությամբ կարող ենք դիմակայել այդ մարտահրավերներին: Եվ միանգամայն օրինաչափ է, որ Հայաստան-Սփյուռք համահայկական 6-րդ համաժողովը անցնում է Հայաստան-Սփյուռք-Արցախ եռամիասնության ապահովման, այդ հարցում բարձր պատասխանատվության դրսևորման նշանաբանով:

Իմ առջև այսօր խնդիր է դրված համաժողովի ներկա թեմատիկ նիստի մասնակիցներին պատմել այն ծրագրերի մասին, որոնք Ռուսաստանի հայերի միությունը նախապատրաստում է իրագործել Հայաստանի սահմանամերձ բնակավայրերի տնտեսական կայուն զարգացման և հուսալի պաշտպանությանն օժանդակելու համար:

Մինչև ելույթի բուն թեմային անցնելը, կցանկանայի նիստի մասնակիցներին իրազեկել այն մասին, որ Ռուսաստանի հայերի միությունը և Համաշխարհային հայկական կոնգրեսն, ելակետ ունենալով այն իրողությունը, որ մեր օրերում աշխարհաքաղաքական բուռն զարգացում ապրող իրադարձությունները դեռ շատ փորձություն կարող են մատուցել, անցյալ տարվա փետրվարին նախաձեռնեցին “Հանուն համազգային միասնության շարժումը”, որն արդեն կյանքի ուղեգիր է ստացել և ձեռք բերել իր համախոհներին: 2016 և 2017 թվականներին Հայաստանում իրագործած մեր բոլոր ծրագրերն, այդ թվում լավագույն գիտական և ստեղծագործական աշխատանքների արդեն բարի ավանդույթ դարձած մրցանակաբաշխությունը, Եվրասիական գործընկերության միջազգային առաջին ֆորումն անց են կացվել “Հանուն համազգային միասնության” շարժման համատեքստում: Այնպես որ, Հայաստան-Սփյուռք ներկա համաժողովի խորագիրը և մեր երկու կազմակերպությունների կողմից նախաձեռնած շարժումը համահունչ են և բխում են ներկա մարտահրավերներին դիմակայելու պայմաններում համայն հայությանը համազգային շահերի շուրջ համախմբելու անհրաժեշտությունից:

Մենք գործնական մթնոլորտում պետք է քննարկեն եռամիասնության բաղկացուցիչ մասերի՝ Հայաստանի, Սփյուռքի և Արցախի կոնկրետ անելիքները: Համազգային միասնության համատեքստում դիտարկելով այդ խնդիրներն անհրաժեշտ է ընդգծել, որ այսօր համազգային միասնության ապահովման շարժիչ ուժ կարող է հանդիսանալ Հայաստանի Հանրապետությունը: Ուստի ներկա իրավիճակում համայն հայության բացառիկ գերակայություն ունեցող խնդիրն է անկախ Հայաստանի և հայոց պետականության պահպանումն ու ամրապնդումը, տնտեսապես, սոցիալապես հզորացումը, նրա անվտանգության ապահովումը: Տնտեսապես, սոցիալապես հզոր Հայաստանն է այն վահանը, որը կարող է պաշտպանել հայ ժողովրդին դարի մարտահրավերներից:

Օրինական հարց է ծագում՝ թե ներկա ժամանակաշրջանում կոնկրետ ի՞նչ ենք ակնկալում Սփյուռքից: Այդ մասին շատ պատկերավոր շարադրել է ՀՀ Սփյուռքի նախարար տիկին Հրանուշ Հակոբյանը իր “Հայկական սփյուռքը հարափոփոխ աշխարհում” գրքում: Կցանկանայի ձեր ուշադրությունը հրավիրել միայն առաջին հատվածի վրա: Հեղինակը նշում է, որ բազմաթիվ խնդիրների շարքում մենք սփյուռքից առաջին հերթին ակնկալում ենք “հայրենիքի հեղինակության, միջազգային վարկի բարձրացման գործում աջակցություն, հասարակական դրական կարծիքի ձևավորում ասպնջական պետությունում և միջազգային ասպարեզում, իրազեկման, լոբբիստական աշխատանքների կազակերպում”:

Հայաստանն իր հերթին լուրջ պարտականություններ ունի սփյուռքի առջև: Դրանք են՝ օժանդակությունը հայապահպանության գործում, աջակցությունը սփյուռքին ինքնակազմակերպման հարցում և բազմաթիվ այլ խնդիրներ:

Նշված և բազմաթիվ այլ խնդիրները մենք պետք է քննարկենք պրակտիկ գործունեության հիման վրա, այլ ոչ թե զգացմունքային մթնոլորտում, որը դժբախտաբար շատ հաճախ է տեղի ունենում:

Մենք այսօր լուրջ անելիքներ ունենք Հայաստանի և Արցախի վերաբերյալ միջազգային իրազեկության բարձրացման, Ադրբեջանի հայատյացության, ռասիստական և հակահայ քարոզչության փորձերի դեմ միասնական պայքար ծավալելու գործում: Այս բացթողումներն ուղակիորեն առնչվում են Հայաստանի և Արցախի անվտանգության ապահովման գործընթացների հետ: Այս հարցում մենք անբավարար ենք օգտագործում բազմամիլիոնանոց սփյուռքի և նրա լոբբիստական կառույցների ընձեռած հնարավորությունները:

Ադրբեջանը սիստեմատիկաբար խախտելով զինադադարի մասին պայմանագիրը, զենքի տարբեր տեսակներից կրակում է Հայաստանի և Արցախի սահմանամերձ շրջանների վրա, որոնք երբեմն ավարտվում են մարդկային զոհերով: Ես կասեի, որ մենք

այդ փաստերի մասին պասիվ ինֆորմացիա ենք տարածում մեր միջավայրում: Ժամանակն է, որ այդ ինֆորմացիան առաջին հերթին տրամադրվի սփյուռքին, նրա լոբբիստական կազմակերպություններին, որպեսզի նրանք կարողանան իրենց բնակության երկրի քաղաքացիներին իրազեկել սահմանամերձ համայնքներում տիրող իրավիճակի մասին:

Մեր դարը ինֆորմացիայի դար է: Դժբախտաբար մենք շատ հաճախ ենք ուշանում օպերատիվ ինֆորմացիա տարածելու գործընթացներից, որից տուժում է ընդհանուր գործը: Բերեմ միայն մեկ օրինակ: Ապրիլյան 4-օրյա պատերազմից հետո Ռուսաստանի հայերի միությունն անմիջապես հանդես եկավ այդ հարցի վերաբերյալ Հայաստան-Սփյուռք համաժողով հրավիրելու առաջարկով: Դժբախտաբար մեր առաջարկը ընդունելությանը չարժանացավ: Մինչդեռ Ադրբեջանը պատերազմից հետո հրավիրեց ադրբեջանական սփյուռքի ներկայացուցիչների համագումար, որտեղ պատերազմի ամբողջ մեղքը վերագրեց Հայաստանին: Ավելին, համագումարն ընդունեց հայտարարություն, որն ուղարկվեց աշխարհի բոլոր երկրների պարլամենտներին, դեկավարներին, միջազգային բոլոր կազմակերպություններին պահանջելով, որ ճնշում գործադրեն “ազդեհիվ” Հայաստանի դեկավարության վրա, որպեսզի դադարեցնի Ադրբեջանի դեմ անընդատ շարունակվող “ազդեհիան”: Այստեղ ևս մենք ուշացանք: Իսկ սոցիոլոգները գտնում են, որ առաջին, թեկուզ և կեղծ ինֆորմացիայի արդյունավետությունը մի քանի անգամ բարձր է նույն երևույթի նկատմամբ հետագա ամենաճշմարիտ ինֆորմացիայից: Այս ամենից մենք պետք է ճիշտ հետևություններ անենք:

Այսօր առանձնակի մոտեցում են պահանջում սահմանամերձ համայնքների զարգացման և անվտանգության ամրապնդման խնդիրները: Հայաստանում առկա է սահմանամերձ մոտ 190 համայնք, որից 92-ը սահմանակից են Ադրբեջանի Հանրապետության հետ: Վերջին տարիներին Հայաստանի իշխանություններն որոշ աշխատանքներ են կատարել այդ համայնքների բնակչության սոցիալական հոգսերի թեթևացման ուղությամբ: Ընդունվել է սահմանապահ համայնքների մասին օրենքը, հարկերից ազատվել են բազմաթիվ համայնքներ, բնակիչները ստացել են որոշակի սոցիալական երաշխիքներ: Արտոնություններ են սահմանվել այդ համայնքների աշակերտների և ուսանողների համար: Ստեղծվել է սահմանամերձ համայնքների հարցերով զբաղվող միջգերատեսչական հանձնաժողով, որն օպերատիվորեն քննարկում է համայնքներում ծագած պրոբլեմները, ձեռնարկում համապատասխան միջոցներ դրանց լուծման համար:

Սակայն այս ամենով հանդերձ սահմանամերձ համայնքները շարունակում են կարևորագույն խնդիր մնալ, ինչպես տնտեսական, այնպես էլ անվտանգության տեսանկյունից: Այդ համայնքների բնակիչները գտնվում են կյանքին և գույքին

սպառնացող մշտական վտանգի ներքո, ինչն էականորեն սահմանափակում է սեփական բարեկեցությունն ապահովելու նրանց հնարավորությունները:

Սահմանամերձ համայնքներում ազգային անվտանգությանը սպառնացող հիմնական վտանգը արտագաղթն է: Արտագաղթը հետևանք է, ուստի պետք է պարզել պատճառները և գտնել լուծման համապատասխան ուղիները: Արտագաղթի հիմնական պատճառը հակառակորդի կրակոցները չեն, այլ գործազրկությունն է և որպես դրա հետևանք՝ բնակության սոցիալական ծանր վիճակը:

Ռուսաստանի հայերի միությունն որոշ ծրագրեր է իրագործել սահմանամերձ համայնքներում: Դպրոցների համակարգչայնացման ծավալուն ծրագրի շրջանակներում համակարգչային դասարաններ են ստեղծվել սահմանամերձ գյուղերի դպրոցներում: Իրագործվել են նաև այլ ծրագրեր: Սակայն մեր իրագործած բոլոր ծրագրերն ունեցել են բարեգործական բնույթ: Այսօր ամենալուրջ խնդիրն աշխատատեղերի ստեղծումն է, որով կլուծվի գործազրկության պրոբլեմը, կբարելավվի այդ համայնքերի բնակչության սոցիալական վիճակը և այդ ամենի արդյունքում խիստ կնվազի արտագաղթի ցուցանիշը, և հատկապես երիտասարդների միգրացիոն տրամադրությունները:

Մեր կազմակերպության կողմից Տավուշի մարզի սահմանամերձ համայնքների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ աշխատատեղերի ստեղծման հնարավոր ուղիները ներդրումներն են: Բարձր ռիսկայնության պայմաններում դրսից եկող ներդրումներ դժվար է ապահովել: Այս հարցում հնարավոր ներդրումների շարքում կարող են լուրջ դեր խաղալ այդ համայնքներից հեռացած և արտասահմանում, առաջին հերթին Ռուսաստանում, բիզնես գործունեություն ծավալած մարդիկ: Ռուսաստանի հայերի միությունը Տավուշի մարզպետարանի օգնությամբ պարզեց, որ մարզի համայնքներից միայն Ռուսաստանում բնակվող հաջողված գործարարների թիվը անցնում է 90-ից: Այդ գործարարներից ոմանք արդեն ներդրումներ արել են: Հատկապես հիշատակման է արժանի Արծվաբերդ գյուղի բնակիչ Սուրեն Երիցյանի փորձը:

Քանի որ մեծ է Տավուշի մարզից Ռուսաստանում աշխատող գործարարների թիվը, ուստի մենք կփորձենք օգտակար լինել մարզի համայնքներում ներդրումների ապահովման գործում նրանց ընդգրկման հարցում: Մենք արդեն ունենք Ռուսաստանում աշխատող գործարարների կոնկրետ հասցեները, կոնտակտները: Մտադիր ենք Մոսկվայում, Ռուսաստանի հայերի միության գրասենյակում կազմակերպել հանդիպումներ նրանց հետ և առաջարկել ներդրումներ անել իրենց փոքրիկ հայրենիքում ու գումար վաստակել հենց Հայաստանում: Մարզպետարանը մեզ տրամադրել է նաև մի քանի տասնյակ ծրագրեր, որոնք կներկայացնենք գործարարների քննարկմանը: Համոզված ենք, որ հետևողական աշխատանքերը կարող են ծանրակշիռ արդյունք տալ: Եվ եթե մեզ հաջողվի ներդրումային քաղաքականությունն ապահովել մարզից մեկնած

հաջողակ գործարարների միջոցով, ապա նույն օժանդակությունը կփորձենք
կազմակերպել նաև մյուս մարզերի սահմանամերձ համայնքերի նկատմամբ:

Շնորհակալություն ուշադրության համար: